0363
5. II. 3.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1894 Թ.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ „ՇԱՒԻՂ“ ՏԱՐԻ

Շաբաթաթերթի

Որպէսզի մի քանի խօսքերով ծանօթացնենք յարգոյ հասարակութեան „Շաւիղի“ ուղղութեան հետ, մենք պարտք ենք համարում սոյն յայտարարութեամբ ասել առայժմ այսքանը. պէտք է ամեն կերպ աշխատենք տալ մեր համեստ հրատարակութեան այն ձեւը, որը, ըստ իւր մտքի և նշանակութեան, գրուած լինի, իբրև պատուանդան, ապագայ աւելի մի լուրջ օրգանի։ Այսպիսակ մի հրատարակութեան պահանջը պարսկահայերը վաղուց է որ զգում են. մենք յանձն առանք տանել այդ ծանր լուծը—հրատարակել մի այնպիսի օրգան, որ կարողանայ ծառայել պարսկահայ հասարակութեան, իբրև արձագանք, նորա առօրեայ կեանքի շահերին իւր բազմակողմանի երևոյթներով։

Ընդ սմին ծանուցանում ենք պարսկահայ հասարակութեան, որ մենք մեր նեղ վիճակում ոչ մի միջոց չը խնայեցինք շաբաթաթերթիս հրատարակութեան իրաւունքը ձեռք բերելու, առանց մի որ և իցէ նիւթական շահի ակնկալութեան։ Մենք մեզ երջանիկ կը համարենք, եթէ չորս կամ հինգ տարուայ ընթացքում գոնեա ծածկենք մեր ծախսերը և մէկ աստիճան բաւականութիւն տուած լինենք նորա մտաւոր և բարոյական պահանջներին։

„ՇԱՒԻՂԻ“ ԾՐԱԳԻՐԸ

1. Առաջնորդող յօդուածներ առաւելապէս պարսկահայ հասարակական կեանքին վերաբերեալ։
2. Ներքին տեսութիւն.—Թղթակցութիւններ և Ներքին լուրեր։
3. Արտաքին տեսութիւն.—Թղթակցութիւններ Արտասահմանից, Քաղաքական բաժին և Արտաքին լուրեր։
4. Մատենախօսութիւն։
5. Խառն լուրեր։
6. Բանասիրական։
7. Հեռագիրներ „Ռէյտերի“ գործակալութիւնից։
8. Յայտարարութիւններ ամեն լեզուներով։

Ծանօթութիւն. „Շաւիղը“ կ'ունենայ իւր առանձին առևտրական բաժին։

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում, կիւրակէ օրերը, տարեկան 50 համար, առայժմ փոքր դիրքով.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒՄ

Տարեկան	1 թուման
Կէս տարուանը	6 ղրան
Առանձին համարները	5 շահի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբ.
Ռուսաստանում բաժանորդագրութիւնը կ'ընդունուի՝ Թիֆլիս Արշակ Նադիրեանցի մօտ, Խիդէկէլի Գրավաճառանոցում։

Արտօնատէր—Հրատարակիչ Ա. Բէկ-Նազարեանց

Հասցէն. Թէհրան, „Շաւիղ“ շաբաթաթերթի խմբագրութեան։ Téhéran, Perse
Rédaction du journal arménien „CHAVIGH“.

№ 1 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 1

42.

1894

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 1 № 1

Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարներ 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran. Rédaction CHAVIGH

ՇԱՒԻՂ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԱԶԳԱՅԻՆ, ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Ճանապարհների հաղորդակցութեան դժուարութեանց պատճառով, մեր աշխատանոցի մամուլը եւ նոր տառերը, հակառակ մեր ակնկալութեան, դեռ չեն հասել: Ուստի պարտաւորւում ենք „Շաւիղի" առաջին մի քանի համարները, մեր ձեռքի տակ ունեցած մասամբ անյարմար տառերով եւ ձեռքի մամուլով տպել եւ առայժմ այդքանով բաւականանալ:

Պարսկաստանի զանազան քաղաքներում ցանկացողները, կարող են բաժանորդ գրուել հետեւեալ անձանց մօտ:

Թաւրիզում՝ պ. Աբրահամ Մելիք Աբրահամեանցի մօտ, Արդաբիլում՝ պ. Յակոբ Էլչիբէկեանցի մօտ, Ուրմիում՝ պ. Ալէքսան Յովսէփեանցի մօտ, Մարաղայում՝ Տ. Մելքոն Խանզադեանցի մօտ, Սալմաստում՝ պ. Յովհաննէս Սարգսեանցի մօտ, Նոր-Ջուղայում՝ պ. Եղիա Եղիայեանցի մօտ, Համադանում պ. Յակոբ Յ. Յակոբեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Մկրտիչ Երեմեանցի մօտ: Ապառիկ բաժանորդագրութիւն ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„Շաւիղը".—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր Թղթակիցներին. Իրէական հողու բացակայութիւնը մեր մէջ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆիրուզայի մի նոր հանքի գիւտը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

„ՇԱՒԻՂԸ"

Մօտաւորապէս 15 տարի է որ պարսկահայերն էլ ըսկսած են մասնակից լինել այն ընդհանուր մտաւոր շարժման, որ ծնունդ է առել աւելի վաղ նոցա միւս ազգակիցների մէջ: Այդ ժամանակից սկսած սկսում են աւելի տեղ ուսումնարաններ բանալ, եղածները կանոնաւորել, ընթերցարաններ հաստատել, ներկայացումներ, գրական երեկոյթներ եւ այլն կազմակերպել: Այդ բոլոր ձեռնարկները, որքան եւ քիչ, այնուամենայնիւ առաջին նախագծերն էին հասարակական կեանքի: Ամէն կողմ հասարակութիւնը սկսում է հետաքրքրուիլ իւր ազգային հաստատութիւններով, եւ թէեւ շատ յաճախ նա կազմում էր իւր դատողութիւններ դոցա մասին, հետեւում էր սխալ ուղղութեան, այնուամենայնիւ մխիթարական երեւոյթ էր տեսնել, որ նախկին անտարբերութիւնը տեղի է տուած բանակռիւների եւ գաղափարների ընդհարման: Այդ առաջին քայլն էր:

Հետզհետէ, այն գաղափարների հոսանքը որ ըսկսում է տարածուիլ ռուսահայ կենդրոններից, պարփակում է իւր մէջ նաեւ պարսկահայերին: Մեր դպրոցները սկսում են ամէն կողմ ձեւուիլ կովկասեան հայ դպրոցների վերայ, նոյն ծրագրով, նոյն դասագրքերով. հէնց ուղղութիւնը, կամ աւելի լաւ է ասել որ եւ հէնց ուղղութեան բացակայութիւնը տեղի է տալիս որոշ ուղղութեան. ռուսահայ թերթերը, վիպասանութիւնները սկսում են մուտ գործել ամէն կողմ, եւ այսպէս հաստատւում է մի տեսակ առնչութիւն, մի միութեան կապ ռուսահայերի եւ պարսկահայերի մէջ. առնչութիւն որ կատարեալ բնական էր, քանի որ պարսկահայերը ունեն մի եւ նոյն բարբառը, սովորութիւնները, բարքերը ինչ որ ռուսահայերը:

Բայց այդ կարեւոր քայլը չէ կատարւում առանց մեծ ընդհարումների. որպէս ամէն նոր ուղղութիւն ունենում է իւր հակառակորդները՝ գաղափարների այս նոր հոսանքն եւս ըսկսում է ունենալ իւր դատապարտողները, եւ ահա այդտեղից ծագում են կուսակցութիւնները: Այդ կուսակցութիւնները շատ անգամ անձնական դրդումներից ծագած՝ մտնում են ըսկզբունքների քօղի տակ, եւ աղմուկը՝ խարխափում է երկու հակառակ կուսակցութիւնների մէջ: Ահա այս

ժամանակ զգացում է մի պարբերական թերթի անդիմադրելի պահանջը: Ճըշմարիտ է որ ռուսահայ թերթերը մասամբ լցնում են այդ պակասը, բայց ոչ կատարելապէս: Իրաւ է, ընդհանուր հայկական կեանքին վերաբերեալ խնդիրների վերաբերութեամբ՝ նոքա տալիս են առատ մրտաւոր սնունդ, բայց ինչ վերաբերում է բուն տեղական հարցերին՝ նոքա բաւականութիւն չեն տալիս: Ինչո՞ւ—որովհետեւ պարսկահայերը — խոստովանութիւնք, գինեք 20 տարով յետ են մնացել իրանց ռուսահայ եղբայրներից: Այն խընդիրները որոնք ռուսահայերի համար յուծուած վերջացած են, այն տարրական ճշմարտութիւնքը որոնց մասին ընդհանուր կարծիք գոյացած է նոցա մէջ, մեր մէջ դեռ վէճի առարկայ են: Գրաբար եւ աշխարհաբարի խնդիր, ուսումնարանական ուղղութիւն եւ ծրագիր, հասարակութեան մասնակցութեան սահմանները իր հատատութեանց վարչութեան մէջ, վնասակար սովորութիւններ, բարքեր, եւ այլն. դոքա բոլորը մեզ համար դեռ լուսաբանուելու, կրկնուելու, վիճաբանուելու իարօտ են, եւ եթէ ամեն պարսկահայ քաղաքում կայ մի փոքրիկ խումբ որ իրացրել է նոր գաղափարները, առուստ հասարակութիւնը դեռ մի որոշ գաղափար չունի դոցա մասին: Հարկաւոր է արծարծել այդ բոլոր խընդիրները, լուսաբանել կարծիքները, լուրջ քննադատութեան միջոցով ազգային հատատութիւնների թերի կողմերը դուրս հանել եւ մէկ խօսքով նպատակ ունենալ առողջ հասարակական կարծիք ստեղծելու:

Ահա այս մտքերն են դրդել մի խումբ երիտասարդների որոնք յանձն են առել "Շաւիղի„ գրական մասին օժանդակել: Թէ ո՞ր քան կը յաջողուի նոցա այդ ձեռնարկը, ապագան ցոյց կը տայ: "Շաւիղի„ խմբագրութիւնը միայն այնքան իրաւ պարտք է համարում յայտնել որ նորա էջերը բաց են հիւրընկալելու համար ամեն մի գրուած որ կարող է ձգտել դէպի նորա նպատակը, միւնչեւ անգամ ամեն մի յօդուած որ տեղի կը տայ լուրջ բանակռուի եւ բացատրութեան:

Բացի դրանից "Շաւիղը„ նպատակ ունի դառնալ մի յարաբերութեան կանգ ոչ միայն պարսկահայերի եւ իր օտար երկրացի աշխատակիցների մէջ, այլեւ նոյն իսկ պարսկաստանի զանազան քաղաքների հայ հասարակութեանց մէջ եւ որոնք իրարուց այն չափ անջատ եւ անտեղեակ են, որչափ երկու հեռաւոր երկիրների բնակիչներ, այլ եւ պարսկաստանի հայ գիւղացիների եւ քաղաքացիների մէջ: „Շաւիղի" համար մասնաւորապէս հետաքրքրելի հարց է պարսկահայ գիւղացիների նիւթական վիճակը բարոյական զարգացումը եւ առհասարակ նոցա կենցաղը:

Նախ քան վերջացնենք՝ մենք մեզ պարտք ենք համարում յայտնել մեր խորին երախտագիտութիւնը դէպի Նորին Գերազանցութիւն Մեհրաբանութեան լուսամիտ կառավարութիւնը, որ միշտ իր բարձր հոգածութեան եւ պաշտպանութեան է արժանացրել ամեն խընդիր որ կապ ունի իր հոյ հպատակների մտաւոր զարգացման հետ:

Այս այժմ այնքան յեստգոյում մենք ստիպ կունենանք ունենի մանրամասնաբար խօսելու այն խնդիրների մասին որոնք մասնաւորապէս նիւթ պիտի կազմեն նրա ուսումնասիրութեան:

Ց. Մ

ՆԵՐՔԻՆ ՅԵՍՈՒԹԻՆ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Այս պարբերական թերթի վերնագիրը կարդացողը՝ կարող է այն սխալ գաղափարը կազմել թէ մենք յանդգնում ենք ժողովրդական կեանքի առաջնորդներ հանդիսանալ և ղեկավարել նորան, և չենք զարմանալ թէ այսպիսի կանխակալ կարծիք կազմողները իրանց շրջաններում, մեզ անարդարաբար ծաղրի առ-

արկայ դարձնեն։ Մենք, հենց թերթիս առաջին թվում շտապում ենք բացատրել մեր պաշտօնը և այսպիսով առաջին առնել վերոյիշեալ սխալ գաղափարի կազմուելու ամեն հաւանականութիւնները։

„Շաւիղը“ պիտի լինէ մի հասարակական ասպարէզ, եթէ այսպէս կարելի է ասել, որի մէջ անհատների գաղափարները ժողովրդական կեանքի վերաբերմամբ, որոնց տակասում են հրատարակուելու միջոց կամ որոնք եթէ պատահաբար դուրս են թռչում իրենց թագստից, տարածւում են մի շատ նեղ շրջանում—այդ տնծանօթ և օգտակար գաղափարները կարող են փոխանակուիլ և մրցել այս ասպարիզում։ Զարգացած և ճշմարիտ գաղափարները այս միջոցով կարող են վաստակել ժողովրդականութիւն և ահա, այս է գլխաւորապէս „Շաւիղի“ նպատակի իրագործումը։

Աւելորդ չենք համարում յայտնել մեր յարգոյ ընթերցողներին, թէ այս թերթն ոչինչ մասնաւոր կուսակցութեան չէ վերաբերում և կ'աշխատէ նոյն դիրքը պահել ներկայ խմբագրական ժողովի զեկավարութեան ներքոյ, որի ջերմ փափագն է վերցնել տեղական հայ հասարակութեան միջից այնպիսի անհամաձայնութիւններ որոնք դրդուած են անձնական շարժառիթներից։

Մեր բացատրութիւններից ընթերցողը կ'տեսնէ որ մեր թերթը բաց է ամեն թղթակցի համար և թէ մենք պատրաստ ենք ուրախութեամբ ընդունել և հրատարակել այդպիսիների շնորհքով գրուածները։

Մեր յարգոյ ընթերցողներին յայտնի է որ Պարսկաստանի մէջ քաղաքներում բնակուող մասը, համեմատաբար պարսկահայերի մի փոքրիկ մասն է կազմում, իսկ ստուար մասը մեր շրջակայ գիւղերում են գտնւում և քանի որ մեծագոյն մասը մեր աւելի մեծ ուշադրութեանը կարօտ է, մենք խնդրում ենք նորանցից որոնք բնակւում են գիւղերում և փոքր ի շատէ զարգացած են, մեզ ծանօթութիւններ տան գիւղերի դրութեան վերայ—Արդեօք դպրից օգնին թէ ոչ եթէ ունին ինչ դրութեան մէջ է, գիւղացիներ նիւթական դրութիւն ինչպէ՞ , որքան բնակիչ, ունի ամեն գիւղ ի՞նչ միջոցներով քաղաքացիները կարող են օգնել նորանց բարոյապէս և այլն։ Այսպիսի գրողներից մենք չենք ակնկալում անսխալ և գեղեցիկ հարերէն շարադրութիւն այլ նոցա գաղափարները, և միայն այս կ'հետաքրքրէ մեզ. իսկ ինչ որ վերաբերում է լեզուին, այդ „Շաւիղի“ խմբագրութիւնը ինքը կ'ուղղէ։

Որպէս զի մեր ապագայ թղթակիցները պատճառ չ'ունենան դժգոհ լինելու մեզանից իրանց ո և է յօդուածը կամ նամակը չ'հրատարակելու համար, մենք յիշում ենք այստեղ մի քանի կանոններ որոնց հետևող թղթակիցը կարող է վստահ լինել որ իւր յօդուածը պիտի ընդունուի։

ա. Նամակները և յօդուածները պիտի ծառայեն այն նպատակներին որոնք բացատրուած են այս թուի առաջնորդող յօդուածին մէջ։

բ. Ամեն այսպիսի գրուածներ պիտի կրեն հեղինակի ստորագրութիւնը և հասցէն, խմբագրութեան տեղեկութեան համար։

գ. Անհատներին վերաբերող յօդուածները, թէ լինեն նոքա յարձակողական կամ գովաբանական, մեզ համար ոչ մի նշանակութիւն չունին, եթէ ոչ այն դէպքում երբ ընդհանրութեան կամ ազգային ո՞ և է մի շահի հետ առնչութիւն ունին։

դ. Հաղորդուած տեղեկութիւնները պիտի ճշմարտութեան վերայ հիմնուած լինեն։

ե. Երեք կամ չորս անգամ սխալ տեղեկութիւններ հաղորդողների թղթակցութիւնները այլ ևս չեն ընդունուիլ։

զ. Նամակները պիտի լինեն աշխարհաբար լեզուով և պարզ ոճով։

Հ. Գ. Բ.

ԻԴԵԱԼԱԿԱՆ ՀՈԳՈՒ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

—

I.

Իւրաքանչիւր ազգի պատմական դերը յայտնւում է նորա կեանքի շատ կամ քիչ հանրամարգկային սկզբունքների մէջ։ Որքան որ ազգը հարուստ է հոգով, նոյնքան նորա պատմական դերը աւելի աչքի է զարնում, այդ ազգը իրաւունք ունի ապրելու և պատմութեան մէջ մի պատկառելի տեղ բռնելու։ Այսպիսի ազգի կեանքը անշուշտ մեր հետաքրքրութեան առակայ պէտք է լինի։

Մեր նախնիքը դարերի ընթացքում իրանցից յետոյ չը թողեցին թէ արուեստագործութեան և թէ առհասարակ գիտութիւնների մէջ իրանց մատաղ զարգացման և հոգևոր գոյութեան հետքը անգամ։ Նոքա ամեն կողմից շրջապատուած լինելով քաղաքակրթուած երկիրներով, Ասորեստանով, Յունաստանով և Պարսկաստանով, մի քանի հազար տարիների ընթացքում Քրիստոսի Ծնունդից առաջ և յետոյ անկարող դը անուեցան նոցա քաղաքակրթութեան պտուղները վայելել, մէկ ատոմ զարգացնել նոցա և, իբրև մի ժառանգութիւն, գացող սերունդի սեփականութիւն դարձնել և ապա յանձնել այլ ազգերին։ Այդ իսկ պատճառով մեզ ազգերի պատմութեան մէջ տեղ չեն տուել և եթէ մի բան յիշում է մեր մասին, յիշում է Հարևանցի կերպով, այն էլ, որպէս մի ազգ, որ գտնուած է եղել շարունակ անտրոց, բաբելացոց, պարսից և այլ ազգերի՞ իշխանութեան ներքոյ։

Սուրբ գիրքն ասում է, որ երկրային դրախտը գտնւում էր Հայաստանում, որ Նոյեան տապանը իջաւ արարատ լեռան վերայ, որ մարդկութիւնը տարածուեց Հայաստանից, հետևապէս մեր հայկական լեզուն, ինչպէս ասում են մեր պատմաբանները, սկզբնական լեզուն է եղել։

Շատ լաւ։ Մենք այս բոլորն, առանց հակառակելու, ընդունում ենք։ բայց, տարաբաղդաբար, մենք ոչինչ օգուտ չենք ստացել դորանից։

Պատմական ազգերի շարքում դասուելու համար հարկաւոր է ոչ թէ ազգի հնութիւնը, այլ հոգին և բարոյական կատարելութիւնքը, որք կենսատու աղբիւրներ պէտք է լինեն թէ իւր սեփականի և թէ այլ ազգերի կեանքի պարզացման համար։

Հայոց ազգի հնութիւնը մարդկութեան համար մէկ նշանակութիւն չի կարող ունենալ, որովհետև Հայերս, դարերի ընթացքում, կեանքի մէջ ցոյց չը տուեցինք հանրամարդկային մի օրինակելի կողմն անգամ։ Միայն հոգին կարող է մարդուն մարդ դարձնել եւ ազգն պատմական, այնտեղ, որտեղ նա չը կայ կեանքը մեռած է։

Եգիպտոսի պատմութեան մէջ մենք տեսնում ենք ստամբիկ ոգուտիայի կրիչ։ Նախախնամութիւնը ծրել է մարդուն մի այն տեսակ երկրի մէջ, որտեղ կիսկիս կրմնքը, հեղեղումը, սեռելի դնամիկմնքը՝ արիներաս զազրելիքներ, Ծանաւոր ամրոցներ, միով բանիւ որտեղ տոնն ինչ ստանում է ոչնչացնել Ստոյ գիւղմնքի, նա այն բոլոր վտանգների մէջ չէ վտանում. կռուում է բնութեան զօրութիւնների դէմ, գտնում է իւր հոգու մէջ այնքան եռանդ և ուժ, որ բարուրանք անելով լեռները, ցամաքեցնում է նոցա հիմնական կամարներ, փորում է ամենին տարածութեամբ ջրանցքներ և լիճերի փոքրիկ ոռոգելու համար, կառուցանում է վիթխարի բուրգեր, կոթողներ. փարաւոնները քրմերի եւ ժողովրդի յետ մնացեալ քուէարկական դատի երկաթի կամաք անընդհատ մտածում են ժողովուրդի կենցաղի ապրելակերպութեան վերայ. հաղորդակցութիւններն հեշտացնելու համար շինում են նորանոր ճանապարհներ, աշխատում են ամեն կերպ ծաղկեցնել երկրում վաճառականութիւնը, կազմակերպել ֆօրրը կ՝ Նուսատորմ՝ նոցա գտնում են նոր ճանապարհներ, հիստատում են գոթամոնիներ, մնցնում են նուազեալ ազգերի մէջ իւրանց կուլտուրան, ուսումնասիրում է

բնութիւնը. ծագում եւ զարգանում են գիտութիւններ եւ վերջապէս, Եգիպտոսը դառնում է հին աշխարհի լուսաւորական կենտրոնը, որտեղ ամէն կողմերից գալիս են ուսումնասէրներ աշխարհի հրաշալիքները զննելու, զարմանալու եւ սքանչանալու: Անհասկիկ, այդ երկիրը, որ առաջ ապառնում էր մարդուն մահով, շնորհիւ նրա հողու մեծութեան, դառն էր մի երկիր հրաշալեաց, որի համար եգիպտացին սիրով զոհում է իւր կեանքը: Անհասկիկ, այն տեսակ մի հոգեւոր կրթիչ էր երեւում մեր մէջ, չընայելով որ ամէն բարեփոխիչ պատմութիւնների մէջ ենք գտնուել կուլտուրական քաղաքակրթուած մի ազգ դառնալու:

Հայաստան, բան Քաջանու, ունի 15000 քառակուսի մղոն: Նա տարածուած է մինչեւ Կասպից, Սեւ եւ Միջերկրական ծովերի եզերքները: Եւրասիայի եւ Կուր գետի միջնորդութեամբ նա հաղորդակցւում է Կասպից ծովի հետ, Ցիպրոս եւ Եփրատով—Պարսից ծոցի եւ Հնդկաստանի հետ, իսկ Ճորոխով Սեւ ծովի հետ: Այդպիսով, մենք վերջիշեալ գետերի եւ ծովերի շնորհ ւ ազատորէն կարող էինք յարաբերութիւն ունենալ հին աշխարհի բոլոր քաղաքակրթուած ազգերի հետ, հետեւաբար, առեւտուրն էլ ծաղկած դրութեան մէջ կը լինէր. նամանաւանդ որ Հայաստանի հարուստ բնութիւնը նպաստաւոր էր արդիւնագործութեան բոլոր ճիւղերին, բայց դժբաղդաբար, բոլորն էլ ողորմելի դրութեան մէջ են եղել, եւ յայտնի է, որ երկրիս համար նորա չէին կարող մի առանձին վաճառականական նշանակութիւն ունենալ: Ցիշեալ արդիւնագործութեան ճիւղերից Իւրաքանչիւրն մշակելու, զարգացման մի որոշ աստիճանին հասցնելու համար անշուշտ հարկաւոր է տոկունութիւն, խնամք եւ անխոնջ աշխատանք, որոնցից, տարաբաղդաբար, զուրկենք եղել մենք: Բնութեան ճոխութիւնը ծուլացրեց եւ անհոգ դարձրեց մեզ: Մենք չ'էինք զբաղւում առեւտրական լուրջ հարցերով եւ հաղորդակցութիւնն ճիշտացնելու, երկրիս մէջ առեւտուրն զարգացնելու համար ճանապարհներ չէինք շինում, վերոյիշեալ արդիւնագործութեան ոչ մի ճիւղի վերայ մենք չը դարձրեցինք լուրջ ուշադրութիւն, ցոյց չը տուինք մեր բնդունակութիւնները: Մի կերպ աշխատել եւ ձեռաց դրամ վաստակել—այս է եղել մեր վերջնական նպատակը. վաճառել թաց անմշակ բերքը այս է եղել միայն մեր գործը. այս իսկ պատճառով եւ կուլտուրան չը կարողացաւ զարգանալ Հայաստանում. այս մենակ առեւտուրն արմատացրեց մեր մէջ «ջարդիական» հոգի, մեռցնելով մնանգամայն սրտի ազնիւ յատկութիւնները:

Ճշտ է, վաճառականական հոգին սեփական է եղել եւ այլ ազգերին, ինչպէս փիւնիկեցիներին կարթագինացիներին, եգիպտացիներին, յոյներին հրեաներին, բայց նոցա վաճառականութիւնը ունեցել է եւ իւր լուրջաւոր կողմերը; Ամբողջ հին աշխարհը փիւնիկեցիների համար դարձել էր մի վաճառականութեան լայն ասպարէզ, նոցա առեւտրականութեամբ հանդերձ գտել են ծովային ճանապարհներ, նորանոր երկիրներ, հիմնել են այնտեղ գաղութներ եւ վաճառականութեան հետ մտցրել են նոցա մէջ իրանց կուլտուրան, կրթութիւնն ու լուսաւորութիւնը. նոյնը արել են եւ յոյները եւ եգիպտացիք եւ ճշմանաւանդ հռոմայեցիք: Ձայերի մէջ մենք գտնենք հակառակը. հայրենասիրութիւնն, եւ ազգային շահերը մեզ տեղ են տուել վաճառականական հոգեւնդին եւ խորութեանց: Ահա թէ ինչու համար մենք, հարկաւ, պէտք է միշտ հանդատակեինք ուրիշ ազգերն, որոնք իրանց հոգու բնդունակութեամբ միշտ բարձր են նրանց մեկնելից *):

(կը շարունակուի)

*) Ցառաջի պակասութեան պատճառով այս յօդուածը տպուած ենք երկու անգամ գրքերով տպագրելի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թեմիս Սրբազան Առաջնորդ, Գեր. Եղիայի Եպիսկոպոսը, որ մօտերս պիտի այցելէր իւր Հնդկաբնակ հայ հօտը, ակնկալութեան պատճառով, լեռ է կացել իւր այդ մտադրութիւնից:

Շարաթաթերթիս առաջին համարը, Ձրիբարի կ'ուղարկուի քանի մի նշանաւոր ազգային հիմնարկութիւններին եւ յայտնի անձանց: Ըստ այսմ կը խնդրենք ցանկացողներին աճապարել բաժանորդագրուիլ, որպէսզի մենք կարողանանք վաղօրօք որոշել «Շաւղի» համարների թիւը:

—

Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանդեանցը, որ Ատրպատականի թեմի Առաջնորդ էր անուանուել, մեկնած լինելով դէպի իւր թեմը, Ղուլֆայում յանկարծամահ է լինում: Հանգուցեալ Մխիթարեան Ստեփանոս եպիսկոպոսից լետոյ, Ատրպատականը կրկին մի կորուստ է ունենում, զրկուելով Աղուանեան սրբազանի նման մի ապագայ առաջնորդից, որը յայտնի էր իւր մեծ տաղանդովը եւ գործի մէջ ունեցած եռանդովը:

—

Այս մէջտեղում քաղաքիս մէջ ճարակում է դիֆթերիտ անուանուած բգացուը, Դավրիժու մէջ մեծ կոտորած անելուց լետոյ. կան ընտանիքներ որոնց մէջ այդ անողորմ հիւանդութիւնը մէկ մէկի ետեւից տարել է բոլոր երեխաներին: Այդ հիւանդութեան սարսափելի փոփոխականութիւնը ամենին յայտնի է, ուրեմն զարմանալի է որ աւելի մեծ զգուշութիւն ձեռք չէ առնւում դրա դէմ: Ամենատարրական բժշկական խորհուրդը որ կարող ենք տալ, այն է որ անմիջապէս որ մի տան մէջ երեւում է այդ հիւանդութիւնը պէտք է հեռացնել տան մէջ գտնուող բոլոր երեխաներին: Այս հիւանդութեան մասին մի քանի բժշկական տեղեկութիւններ մենք կը հաղորդենք մեր հետեւեալ համարի մէջ:

—

Շիրազի ճանապարհի վերայ Սպահանից 35 ֆարսախ (1 ֆարսախը 7 վերստ է) հեռաւորութեամբ Աբադէ գիւղաքաղաքն է գտնուում, որի երեք մասն անձրեւի սաստիկ հեղեղումից կործանուել է եւ հարիւրաւոր ընտանիքներ ծանր նիւթական վնասներ են կրել:

—

Ղուչանի երկրաշարժից լետոյ Մէջէդի մէջ էլ սկսել են մի քանի ցնցումներ զգացուել:

—

Ուրախութեամբ լսում ենք որ յունվարի 3-ին լոյս է տեսնելու Թէհրանում մի նոր շաբաթաթերթի ֆրանսերէն եւ պարսկերէն լեզուներով: Որպէս ամեն քայլ որ նպաստակ ունի ժողովրդի զարգացումը, այս նոր թերթն էլ մեր համակրութիւնն է վայելում եւ մենք շնորհաւորում ենք նորա հրատարակումը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԼՈՒԷՆՅԻ ՄԻ ՆՈՐ ՀԱՆՔԻ ԳԻՒՏԸ

Անգլիական մի լրագրում կարդում ենք հետեւեալը: Աւստրալիայի Վիկտորիա նահանգում վերջերս գտնուել է Ֆիլուզայի մի նոր հանք:—Այդ գիւտն անող տարոնը երկաւ ուրիշ ընկերների հետ ձեռք է բերում հանքը բանեցնելու արտօնութիւնը:—Նորա առաջին քնդամ մի փոքրիկ քանակութեամբ Ֆիլուզայ հանում եւ ուղարկում են Եվրոպայ. որը լաւ վաճառք է ունենում, ապէս նրա արտահանում են աւելի մեծ քանակութեամբ:

Այս նոր Ֆիլուզան շուտով պիտի սկսի մրցել Պարսկաստանի Խորասան նահանգի Ֆիլուզայի հետ, որի հանքը մինչեւ հիմա միակն էր ամբողջ աշխարհում:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն, դեկ. 256 յունվար «Իլիստրէի» գործակատարը Սիէռռա-Լիոնից հեռագրում է թէ լուր է տարածուած որ ֆրանսիական զօրքերը յարձակուել են Սօֆիաների ցեղի դէմ ուղարկուած մի անգլիական բանակի վերայ, նոցա բնիկներ կարծելով:—Յարձակմանը հետեւում է մի կատաղի ճակատամարտ որի մէջ կապիտան Լէնգի Սիէռռա-Լիոնի պոլիցիայի վարչութեան տեսուչը 26 հոգի իր մարդկանցով, և Ուէստ-Ինդիա վաշտից բազմաթիւ օֆիցերներ և մարդիկ սպանուած են: Նոյնպէս լուրեր կայ որ ֆրանսացի օֆիցերը գերի է բռնուած:

Լոնդոն, դեկ. 256 յունվար, Սիէռռա-Լիոնի մեր թղթակիցը հաստատում է այն լուրը որ ֆրանսացիների և անգլիացիների մէջ մի կռիւ է տեղի ունեցել: Դեկտեմբերի 11|23-ին, լուսաբացից առաջ, ֆրանսացիք յարձակւում են անգլիացիների բանակի վերայ, անգլիացիք սկսում են կրակ անել: Կռիւը տեւում է քիչ ժամանակ և ֆրանսացիք քաշւում են: Հրամանատարը՝ տեղակալ Մարիս, որ սաստիկ վիրաւորուած էր, բերուելով անգլիացիների բանակը, մեռնում է: Մարիս բայատարում է որ ինքը անգլիացիներին՝ Սօֆիաներ, և նոցա օֆիցերներին արաբներ կարծեց: Ֆրանսացիներից 10 հոգի մեռնում են, մինչդեռ Ուէստ-Ինդիա վաշտից մեռնում են տեղակալ Լիզրօն և ուրիշ երկու հոգի և երեք հոգի էլ սաստիկ վիրաւորւում են:

Լոնդոն, դեկ. 267 յունվար: Փարիզի մի կիսապաշտօնական թերթ, այս խնդրի մասին գրելով ասում է որ անգլիացիների այս մասին տուած լոգքերը հաստատուելով, ֆրանսացիները պիտի մի փոխարինութիւն անեն: Ֆրանսական և անգլիական մամուլները նկատում են այդ դէպքը որպէս մի տարաբախտ սրախոյ: Երեւի կրակը 40 տոպէ տեւած կը լինի: Անգլիական բանակի հրամանատարը, գնդապետ Էլիս գրել է ֆրանսական հրամանատարին, յայտնելով որ այդ դէպքի պատճառով իրանց քարեկամական յարաբերութիւնքը չը պիտի խզուին: Գնդապետ Էլիսի հաղորդած լուրից յայտնւում է որ նախ քան ֆրանսացիների հետ ունեցած այդ կռիւը, նա յաղթել էր Սօֆիաներին Աելէդոնի մէջ:

Արտօնատէր-Հրատարակիչ Անդրէաս Բէկնազարեանց: